



«ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում TelCell համակարգով դրամական փոխանցումների իրականացման հիմնական պայմաններ

1. Ընդհանուր պայմաններ

1.1. Բանկն իրականացնում է TelCell դրամական փոխանցման համակարգի միջոցով դրամական փոխանցումներ ՀՀ տարածքում ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո և ՌԴ ռուբլի արժույթներով:

1.2. Բանկը փոխանցվող գումարի ընդունումը կատարում է փոխանցման արժույթով, ինչպես նաև ցանկության դեպքում այլ արժույթով՝ փոխարկումով:

1.3. TelCell դրամական փոխանցում ուղարկողը վճարում է փոխանցման միջնորդավճարը ՀՀ դրամով:

1.4. TelCell դրամական փոխանցումը ստացողից միջնորդավճար չի գանձվում:

1.5. TelCell դրամական փոխանցման ուղարկման կամ վճարման դիմաց Բանկը հաճախորդին է տրամադրում փոխանցման ստացումը կամ ուղարկումը հավաստող անդորրագիր:

1.6. TelCell դրամական փոխանցման ուղարկումից հետո դրամական փոխանցումը հասանելի է 1-5 րոպեի ընթացքում:

2. Ուղարկված դրամական փոխանցման մեջ փոփոխությունների իրականացում

2.1. TelCell դրամական փոխանցման համակարգով ուղարկված փոխանցման տվյալների փոփոխությունն իրականացվում է դրամական փոխանցումն ուղարկողի գրավոր դիմումի հիման վրա՝ անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

2.2. Փոխանցման մեջ հնարավոր է ուղղել միայն ստացողի անունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվը և հասցեն:

2.3. Կատարված փոխանցման մեջ չեն կարող փոփոխություններ կատարվել, եթե գումարը վճարվել է դրամական փոխանցումը ստացողին և ստացողը հրաժարվում է փոխանցված գումարը վերադարձնելուց:

2.4. Բանկը չի գանձում լրացուցիչ վճարներ TelCell դրամական փոխանցման համակարգով ուղարկված դրամական փոխանցման մեջ փոփոխությունների իրականացման համար:

3. Ուղարկված դրամական փոխանցման չեղյալացում

3.1. TelCell դրամական փոխանցման համակարգով ուղարկված դրամական փոխանցման չեղյալացումն իրականացվում է դրամական փոխանցումն ուղարկողի գրավոր դիմումի հիման վրա՝ անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

3.2. TelCell դրամական փոխանցման համակարգով փոխանցման չեղյալացումն իրականացվում է դրամական փոխանցման ուղարկման միևնույն օրվա ընթացքում:

3.3. Կատարված փոխանցումները չեն կարող չեղյալ համարվել, եթե գումարը վճարվել է ստացողին և ստացողը հրաժարվում է փոխանցված գումարը վերադարձնելուց:

3.4. Բանկը չի գանձում լրացուցիչ վճարներ ուղարկված դրամական փոխանցումը չեղյալ համարելու համար:

4. Ուղարկված դրամական փոխանցման հետ վերադարձման ընթացակարգը

4.1. TelCell դրամական փոխանցման համակարգով ուղարկված դրամական փոխանցման հետվերադարձն իրականացվում է դրամական փոխանցումն ուղարկողի գրավոր դիմումի հիման վրա՝ անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

4.2. Ուղարկված դրամական փոխանցման հետ վերադարձն իրականացվում է ստացող բանկերի կողմից սահմանված ժամկետներում:

4.3. Կատարված փոխանցումները չեն կարող հետ վերադարձվել, եթե գումարը վճարվել է ստացողին և ստացողը հրաժարվում է փոխանցված գումարը հետ վերադարձնելուց:

4.4. TelCell դրամական փոխանցման համակարգով դրամական փոխանցումը հետ վերադարձնելու դեպքում միջնորդավճարը հետ չի վերադարձվում հաճախորդին:

4.5. Բանկը չի գանձում լրացուցիչ վճարներ ուղարկված դրամական փոխանցումը հետ վերադարձնելու համար:

4.6. Դրամական փոխանցումը ստացողի չհայտնաբերվելու դեպքում փոխանցված դրամական միջոցները կարող են մնալ համակարգում TelCell համակարգի կողմից սահմանված ժամկետներում: Տվյալ դրամական միջոցների հետ վերադարձն իրականացվում է դրամական փոխանցումն ուղարկողի գրավոր դիմումի և անձը հաստատող փաստաթղթի հիման վրա տվյալ համակարգի կողմից սահմանված ժամկետներում: